ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, /+37460/720072, kapanmayor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 օգոստոս 2024 թվականի N 1312-Ա

<<ՄԱՆՍԵՐԳՈ>> ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետը, հաշվի առնելով Կապանի համայնքապետարանի ու <<Մանսերգո>> ՍՊԸ միջև 2022թվականի դեկտեմբերի 20-ին կնքված Կապանի համայնքապետարանի կարիքների համար <<Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց>> ՀՈԱԿ-ի շենքի մասնակի վերանորոգման և ջեռուցման համակարգի վերականգնման աշխատանքների կատարման ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-22/19 ծածկագրով գնման պայմանագրի միակողմանի լուծման հանգամանքը՝ որոշում եմ.

1. <<Մանսերգո>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով տեղեկատվություն ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն և <<Մանսերգո>> ՍՊԸ-ին՝ համաձայն կից Հավելվածի:

2. Հանձնարարել ֆինանսական բաժնին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել որոշման հաստատման օրվան հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ**

2024թ. օգոստոսի 16
ք. Կապան

Հավելված 1

Կապան համայնքի ղեկավարի

16 օգոստոսի 2024թ. թիվ 1312-Ա որոշման

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
<<Մանսերգո>> ՍՊԸ	09420185	Ք. Կապան, Ռ. Մինասյան փողոց, շենք 4		V		16.08.2024թ. թիվ 1312-Ա, ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-22/19